

ԱՆՏԻԿ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՀԵՏ ՊՈՒՇԿԻՆԻ ԾԱՆՈՒԹՅԱՆ ՍԿԻԶԸ

Ն. Ս. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Վաղուց են ուշադրության արժանացել Պուշկինի յուրահատուկ վերաբերմունքը անտիկ աշխարհի նկատմամբ, այն կարևոր դերը, որ ունեցել է անտիկ աշխարհը Պուշկինի ստեղծագործության և աշխարհայացքի վրա նրա ողջ կյանքի ընթացքում: Անտիկ մշակույթը Պուշկինի համար ինչ-որ անփոփոխ բան չէր: Նրա ֆունկցիաները և դերը փոխվում էին գրողի ստեղծագործական աժի հետ միասին: Ինչպես նշել է ակադեմիկոս Ի. Ի. Տոլստոյը, անտիկ մշակույթը, որ սկզբնապես Պուշկինը ընկալում էր դիցաբանական սիմվոլիկայի հայեցակետով, որպես ինչ-որ ծածկագիր՝ ընդունված Արևմուտքի ազնվականության կողմից, հետագայում դարձավ քաղաքացիական քնարերգության նախանշան:

Վաղ շրջանում անտիկ աշխարհը ներկայանում էր Պուշկինին գերազանցապես իր դեկորատիվ-դիցաբանական կողմով: Երփտասարդ Պուշկինին այն տալիս էր հին բանաստեղծների դիժմականությունն ու ժանրային նմուշները, բացում էր նրա առջև դիցաբանության աշխարհը, ծանոթացնում նրան հին աշխարհի փիլիսոփայական աշխարհընկալման և տրամադրությունների ընդհանուր բնույթի հետ:

Սովորաբար ընդունված է համարել, որ անտիկ աշխարհը լիցեյական պոետի հոգուն տիրեց ֆրանսիական կլասիցիզմի միջնորդությամբ՝ թարգմանությունների, դասագրքերի և ֆըրանսիացի բանաստեղծների թուն անթոլոգիական քնարերգության միջոցով:

Ղեկնա իր հայրական տանը, մինչև լիցեյ ընդունվելը, Պուշկինը Պ. Բիտոբեի թարգմանությամբ կարդացել էր «Իլիականն» ու «Ոդիսականը»:

Անտիկ մշակույթի հետագա ընկալման գործում մեծ դեր ունի Յարսկոսելսկի լիցեյի կրթական համակարգը: Այդ համակարգի մեջ էր մտնում դպրոցական լատիներենը, և Պուշկինը՝ Ն, Ֆ. Կոշանսկու աշակերտը, Ա. Ա. Դելվիգի, Ա. Կ. Իլլիչևսկու ընկերը, «պարտադիր» շփվում էր անտիկ գրողների հետ: Պուշկինի հետաքրքրությունը անտիկ աշխարհի նկատմամբ Լիցեյում զարգանում էր Ն. Ֆ. Կոշանսկու՝ լիցեյիստների շրջանում անտիկ մշակույթի «գլխավոր քարոզչի», ուսուցման անմիջական ազդեցության տակ: Նա թարգմանում էր հին բանաստեղծներին և իրականացնում դասական գրողների մի շարք հրատարակություններ:

1817 թ. Կոշանսկին հրատարակեց երկհատորանի դասագիրք՝ «Առձեռն գիրք հին դասական բանարվեստի, որը պարունակում է հնագիտություն, դասական հեղինակների լուսաբանություն, հունական և հռոմեական դիցաբանություն և հնություններ» վերնագրով: Սա էշենբուրգի երկի թարգմանությունն էր՝ թարգմանչի որոշ լրացումներով: 1811 թ. Ն. Ֆ. Կոշանսկին հրատարակեց «Հունական պոեզիայի ծաղիկները», մի անթոլոգիա, որի միջոցով Պուշկինը կարող էր ծանոթանալ հույն բանաստեղծների հետ: Վարելով լատիներենի դասընթացը Լիցեյում, Կոշանսկին միաժամանակ հին աշխարհի ուսումնասիրման բնագավառում նշանավոր մասնագետ-գիտակ, դասական բանաստեղծների մի շարք հրատարակությունների հեղինակ և դրանց մեկնաբան էր: Իր դասագրքերում նա հիշատակում էր Անակրոնիսի, Թեսպիսի, Արիստարքոսի, Էսքիլեսի, Եվրիպիդեսի, Սոֆոկլեսի և ուրիշների անունները, բացատրում անտիկ հասկացությունները և դիցաբանական կերպարները, հղումներ էր անում լատինական գրականությունից: Իր աշխատություններում նա ձգտում էր կամուրջ գցել հին աշխարհի և Պուշկինի ժամանակակից գրականության միջև, նկատելով. «Գ. Ռ. Ղերծավիդի, Ն. Ս. Կարամզինի և Ի. Ի. Դմիտրիևի քերթվածքներում մենք տեսանք այդ ստեղծագործությունների որոշ անգնահատելի մնացորդներ, Ե. Ի. Կոստրովը ցույց տվեց մեզ հոմերոսյան աստվածների լեզուն: ԻՆչը կարող է Ի. Ֆ. Բոգդանովիչի ստեղծագործություններից ավելի հաճելի լինել: Ո՞վ չի լացել Էդիպի դժբախտությունների վրա՝ նկարագրված Վ. Ա. Օգերովի կողմից»: Օրիոնի, Ռեդյակոսի, Պրոզերպինի, Պիգմալիոնի, Ադոնիսի, հավերժահարս Էլուսի, Օրփեոսի և Էվ-

¹ Пушкин в рассказах и воспоминаниях современников. М., 1950, с. 52—53.

րիդիկեի, Լեդեի մասին առասպելները, այսինքն՝ անթուրգիական պատկերացումների որը շնչանակը, որը մշտապես հանդիպում էր Պուշկին-լիցեյիստի բանաստեղծություններում, կան Կոշանսկու գրքում: Ն. Յ. Կոշանսկին ընդգծում էր այն ցանկությունը, որ «Մուսայի ռուս սիրահարները ուշադրություն դարձնեն հույների բանարվեստին, որն անհրաժեշտ է, թվում է, մեր մայրենի լեզվի կազմավորման համար, և, եթե հնարավոր է, զուգակցեն գիտելիքները ճաշակի հետ»²:

Կոշանսկին լիցեյական ստեղծագործության հատուկ ձև էր համարում դասարանական շարադրությունները: Հաբոնի է Ի. Ի. Պուշկինի պատմվածքը, որը բնութագրում է դասարանական այդ բանաստեղծական խնդիրները: «Ինչպես այժմ, տեսնում եմ Կոշանսկու այն հետճաշյա դասարանը, երբ, ավարտելով դասախոսությունը դասաժամից մի փոքր շուտ, պրոֆեսորն ասաց. «Այժմ, պարոնա՛ք, պետք է փորձենք մեր գրիչները. ինձ համար նկարագրեք, խնդրեմ, վարդ՝ բանաստեղծությամբ»: Մեր բանաստեղծությունները ոչ մի կերպ չէին առացվում, իսկ Պուշկինը մի ակնթարթում կարողաց երկու քառատող, որոնք հիացրին մեզ բոլորիս: Կոշանսկին ձեռագիրն իր մոտ պահեց: Դա կարժես թե 1811 թվականն էր»³:

Անտիկ մշակույթի ուսումնասիրման կարևորագույն ձեռնարկ էր «Առձեռն գիրք հին դասական բանարվեստի՝ հավաքված էշենբուրգի, բազմապատկված Կրամերի և լրացված Ն. Կոշանսկու կողմից» ժողովածուն: Ռուսական թարգմանությունը պատրաստել էր Կոշանսկին՝ էիցեյի պարապմունքների ընթացքում: Չեռնարկն ընդգրկում էր հունական ու հռոմեական բանարվեստը և բաղկացած էր հետևյալ բաժիններից. «Հնագիտություն», «Դասական հեղինակների լուսաբանություն», «Գիցաբանություն», «Հնություններ»: Յուրաքանչյուր բաժնի վերջում տրվում էր առարկայի՝ իր ժամանակի համար լրիվ մատենագիտությունը տարբեր լեզուներով, այդ թվում և հին գրողների ռուսական թարգմանությունների մատենագիտությունը՝ կազմված Կոշանսկու կողմից: Լիցեյիստների համար էշենբուրգ-Կոշանսկու դասընթացում հատկապես հետաքրքրություն էին ներկայացնում հին գրականությունների և առանձին գրողների բնութագրումները: Չեռնարկում Պուշկինը կարող էր գտնել Անակրեոնի, Սապֆոյի, Պինդարոսի, Մոսքեսի, Բիոնեսի, Աթենեսի, Էպիկտետի բնութագրումները: «Ուղեցուցում» հիշատակվում էին և՛ Թիրեուսը, և՛ Պրուպերցիոսը, և՛ Պետրոնիոսը, և՛ Տակիտոսը: Դիցաբանության բաժինը ծանոթացնում էր պատմական ու առասպելական ավանդությունների և Հուստանի ու Հոմի հին աստվածների և կիսաստվածների մասին պատմություններին:

Ինչպես վկայում է Ա. Դ. Կոմովսկին, Կոշանսկին «օգտագործում էր բոլոր միջոցները, որպեսզի հնարավորին չափ ավելի հանգամանակից ծանոթացնի Պուշկինին մայրենի լեզվի տեսության և հին դասական բանարվեստի հետ»⁴: Ոչ միայն Կոշանսկու շեռնարկները, այլև դասախոսությունները հազեցած էին հարուստ նյութով, որը դնում էր անտիկ մշակույթի նըկատմամբ Պուշկինի վերաբերմունքի «անկյունաքարը»: Այդ մասին են վկայում և Պ. Ե. Գեորգիևսկու դասախոսությունները, որը հաճախ փոխարինում էր Կոշանսկու: Պ. Ե. Գեորգիևսկու դասախոսություններում («Գեղագիտության ներածություն») հանդիպում էին և Կոշանսկու նյութերը: Կոշանսկու լիցեյական դասախոսությունները՝ ըստ Ա. Ս. Գորնակովի գրառումների, պատմում են Պինդարոսի, Թիրսեսոսի, Հոմերոսի մասին, հիշատակում են Բիոնեսի, Օվիդիոսի, Թիրեուսի, Պրուպերցիոսի մի շարք ստեղծագործություններ, հղումներ են անում Կատոլլոսից, Սապֆոյից, Անակրեոնից:

Պուշկինը հին աշխարհի մասին տեղեկությունների մեծ պաշար էր ստացել և Լիցեյում արդեն կարող էր կողմնորոշվել անտիկ կերպարների, դիցաբանության անվանացանկի մեջ: Ռուսումնական ընթերցանության այդ շրջանակը ձևավորեց լիցեյիստների պատկերացումները անտիկ աշխարհի մասին. Կոշանսկու դասախոսություններն ու գրքերը Պուշկինի մոտ հետաքրքրություն առաջացրին բանաստեղծական հնարարի նկատմամբ: Մեծագույն ռուս բանաստեղծները, որոնք երկերը պուշկինյան ստեղծագործության հիմքը հանդիսացան, իրենց ուշադրության զգալի բաժին էին հատկացնում հին բանաստեղծների երկերի թարգմանություններին և ընդորոշակումներին:

Լիցեյիստների շրջանում մշակվում էին անթուրգիական մոտիվները: Դրանք բոլորը, երբեմն ֆրանսիական կամ գերմանական միջնորդավորմամբ, երբեմն անմիջականորեն բնագրի տեքստերի հետ շփումից, ստեղծում էին անտիկ մշակույթի մասին ռուսական ըմբռնումը:

Լիցեյի գրական կյանքը դրսևորվում էր բազմաթիվ լիցեյական ամսագրերում: Այդ ժողովածուներում ընդգրկված բանաստեղծությունների քանակով կարելի է դատել, թե ինչպես էին գնահատում լիցեյիստներն իրենց բանաստեղծներին: Առաջին տեղում է Պուշկինը, երկրորդ տեղը գրավում է Ա. Ա. Ռեվկոզը, նրանից հետո՝ Ա. Դ. Իլլիչևսկին, Ն. Ա. Կորսակովը «լիցեյական» բանաստեղծների համաստեղծության վերջում է:

² Д. П. Якубович. Античность в творчестве Пушкина.—В кн.: Пушкин. Временник Пушкинской комиссии. М.—Л.; 1941, т. 6, с. 99.

³ Նույն տեղում:

⁴ Д. П. Якубович. Նշվ. աշխ., էջ 100:

Ռարաշքջանի քնարական պոետին հնարավոր չէ պատկերացնել առանց անտիկ մոտիվների: Անտիկ գրողները ուղեկցել են Պուլկինին լիցեյական տարիներից պսամ մինչև նրա մահը: Նա ուսումնառել է Ռուսիայի իր կյանքը ու ստեղծագործության վճռական պահերին և ուսումնառել է Ռուսիայի մասին իր գիտելիքները, որ իր մասին խոսել է նրանց լեզվով: օրինակ՝ Օվիդիոսի լեզվով իր աքսորի մասին դեպի Բեսարաբիա, և Տակիտոսի լեզվով՝ Սիլվալուսիոսի մասին:

1792 թ. բանաստեղծ Ե. Ի. Կոստրովը թարգմանում է և Մուսկովայում տպագրում Օսիանի պոետների ֆրանսիական հրատարակությունը՝ «Օսիան, ֆենեզիների որդի, երրորդ դարի գուսան. գաղղիական բանաստեղծություններ» (I—II նասեր) վերնագրով: Գրեթե երեք տասնամյակների ընթացքում Օսիանի պոետների այդ երկու արձակ թարգմանությունները ուսումնասիրողների սի քանի սերնդի համար բազմաթիվ բանաստեղծական ձևափոխումների, ընդօրինակումների, ոճավորումների հիմք են հանդիսացել: Այն հեղինակների լեզվում, ովքեր տուրք են տվել այդ հրատարակման, կարելի է նշել Գ. Ռ. Գերժավինին, Ա. Ֆ. Մերզլայկովին, Վ. Ա. Մուկոմսկուն, Վ. Ն. Բատուլովին, Պ. Պ. Կատենինին: Օսիանի գրված ազդեցությունն է կրել նաև երիտասարդ լիցեյիստ Պուլկինը: «Օսիանը սեղանի գիրք էր Լիցեյում և մի որոշ ժամանակ Պուլկինի սիրելի ընթերցանության նյութն էր»⁵: Օսիանի նմանողությամբ են գրված 1814 թ. Պուլկինի առաջին բալլադները՝ «Կոլնան», «Էվելզան», «Օսգարը»⁶:

Նրանց այդ ժամանակ էլ Գնեդիչը թարգմանում էր «Իլիականը», որի առաջին թարգմանությունները տպագրվում էին ամսագրերում՝ Պուլկինի՝ Լիցեյում գտնվելու տարիներին: Նետաքրքրվելով /Հորացիոսով, Պուլկինն ընկալում էր նրան Ս. Վ. Լոմոնոսովի և Գ. Ռ. Գերժավինի միջոցով: Հորացիոսը Պուլկինի ստեղծագործության մեջ ներկայանում է՝ մի շարք երրորդություններով՝ որպես «կյանքի ուսուցիչ», որպես անկրկնելի անհատ, որպես քնարերգու, երգիծաբան, պոետիկայի հեղինակ⁷:

Նրան աշխարհի անուններից, որոնք հետաքրքրել են Պուլկինին, հատկապես առանձնանում է Անակրեոնի անունը: Հույն բանաստեղծի պոետիկա հայտնի էր Պուլկինին նաև ֆրանսիական և ռուսական թարգմանությունների հիման վրա: Գերժավինի «անակրեոնյան պոետիկան», Լոմոնոսովի, Գնեդիչի, Մուկոմսկու ընդօրինակումները, Ն. Լվովի և Ի. Մարտինովի Անակրեոնից թարգմանությունները հնարավորություն էին տալիս Պուլկին-լիցեյիստին շփվել իրեն հետաքրքրող թեմայի հետ: Լիցեյական տարիների պուլկինյան անակրեոնիզմը վերաբերում է ամենաընդհանուր մոտիվներին: Պուլկին-լիցեյիստի ծանոթությունը հոունական պոետներին (Հորացիոս, Օվիդիոս, Կատուլա, Թիբուլոս) ընթանում էր ֆրանսիական ու ռուսական թարգմանությունների և ընդօրինակումների միջոցով:

Անտիկ աշխարհի բոլոր բանաստեղծներից Հորացիոսը Պուլկինի ողջ կյանքի ընթացքում գրավում է առաջին տեղը՝ նրան դիմելու քանակով: Նրա հետ չի կարող համեմատվել Նույնիսկ Օվիդիոսը, թեպետ նա Նույնպես Պուլկինի համար մեծ նշանակություն ուներ: Հորացիոսով Պուլկինը տարվում է լիցեյական նստարանից: Դեռևս 1814 թ. «Փոքրիկ քաղաք» բանաստեղծության մեջ հիշատակված է «դյուրազգաց Հորացիոսը»: 1815 թ. Գալիչին գրված ուղերձում Հորացիոսն անվանված է «Տիբուլյան իմաստուն», իսկ Յուդիսին գրված ուղերձում հիշատակված է Լաֆոնտենի կողքին: 1822 թ. սեպտեմբերի 1-ին Քիշինից Կյազմսկուն գրված նամակում Պուլկինը հիշատակում է. «Հորացիոսի սատիրան նուրբ է, թեթև և ուրախ»,—բնորոշում, որը հիշեցնում է Պուլկինին լիցեյական տարիներից ծանոթ Լազարայի դասագրքի բնորոշումը⁸:

Պուլկինի երկերում մեջբերումներ կան Հորացիոսից, և ակնարկներ նրա մասին, և կարծիքներ: Պուլկինն ունի նաև ուղղակի ընդօրինակումներ: Դրանք են՝ «Հուլիան» բանաստեղծությունը՝ գրված Գերժավինի «Հուլիանի» պատվին, որի աղբյուրը Նույնպես Հորացիոսն էր, VII ներբողի թարգմանությունները («Ո՞ր աստվածն է ինձ վերադարձրել», 1835 թ.), «Արքաների ժառանգ Մեցենասի...» անվարտ թարգմանությունը (1833 թ.):

Հաճախ է Պուլկինն անդրադարձել նաև Վիրգիլիոսի ստեղծագործությանը: Նա օգտվել է ոչ միայն թարգմանություններից, այլև լատիներեն բնագրից: Վիրգիլիոսի «Բուկոլիկների», «Գեորգիկների» և «Էնեականի» բնագրի մեկ օրինակ (1817 թ. հրատարակություն) Պուլկինի ինքնագրով պահպանվել է մինչև մեր օրերը:

⁵ Ե. В. Чубукова. Лицейская лирика Пушкина в литературном процессе 1810 г.— В сб.: На путях к романтизму. Л., 1984, с. 196.

⁶ Л. А. Степанов. Пушкин, Гораций, Ювенал.— В сб.: Пушкин. Исследования и материалы. Л., 1978, т. VIII, с. 74—75.

⁷ Пушкин в воспоминаниях современников. Л., 1936, с. 52.

⁸ М. М. Покровский. Пушкин и античность.— В кн.: Пушкин. Временник Пушкинской комиссии. М.-Л., 1939, тт 4—5, с. 45.

Լիցեյիստ-Պուշկինն իրեն համարում է Տիբուլլոսի հոգեորդին, իսկ Բեստուժկին գրած նամակում (1825 թ. մայիսի վերջ—հունիսի սկիզբ) Օվիդիոսին և Լուկրեցիոսին կոչում է հանձարներ:

Հոռմեական բանաստեղծներից Պուշկինի համար ամենապիրելին Օվիդիոսն էր: Հատկապես մոտ է դառնում Օվիդիոսը Պուշկինին Բեսարաբիա աջտրվելու ժամանակից, հենց իր՝ Օվիդիոսի աջտրավայրից ոչ հեռու: Պուշկինը ոչ թե պարզապես սիրում է Օվիդիոսին. նա համարում է նրան մարդկային սրտի, հասկապես սիրո, հեղինակավոր գիտակ: «Օվիդիոսին» բանաստեղծությունը արդյունք է հոռմեական բանաստեղծի՝ աջտրում գրված եղերերգությունների լավ իմացության: Բանաստեղծության մեջ Պուշկինը համատոտակի վերարտադրում է Օվիդիոսի անվերջանալի բողոքներն ու դիմումներն իր ընտանիքին և ընկերներին՝ Օգոստոսի ցասումը մեղմելու խնդրանքով: Այդ ամենի մեջ երևում է լավ ծանոթությունը Օվիդիոսի եղերերգությունների երկու գրքերին: Ի. Պ. Լիպրանդին գրել է. «Օվիդիոսը շատ է զբաղեցրել Պուշկինին. չգիտեմ, կարո՞ղացե՞լ էր նա նախկինում նրան, բայց գիտեմ այն, որ ինձնից վերցրած նրա առաջին գիրքը Օվիդիոսն էր՝ ֆրանսիական թարգմանությամբ, և այդ գրքերը մնացին նրա մոտ 1820-ից մինչև 1823 թվականը»⁹:

Ի. Պ. Լիպրանդին խոսում է ֆրանսիական թարգմանության մասին, բայց, դատելով Պուշկինի նամակներում այդ գրքերից արված լատիներեն մեջբերումներից, նրան ծանոթ է եղել և բնագիրը: Հավանաբար Լիպրանդիի հրատարակությունը պարունակել է ոչ միայն թարգմանությունը, այլ նաև Օվիդիոսի լատիներեն տեքստը: Բանաստեղծության հիմնական թեման բանաստեղծի արտաքսումն է: Օվիդիոսի անունը Պուշկինի համար հնչում է իբրև աջտրական-բանաստեղծի անուն:

Անտիկ գրականությունը աչքի ընկնող տեղ է գրավում ոչ միայն Պուշկինի աշխարհայացքի ձևավորման գործում, այլև նրա ստեղծագործության մեջ: Ահա թե ինչու է նա պնդում, որ «ամեն մի կրթված եվրոպացի պետք է բավարար հասկացողություն ունենա վեհապանծ հնաշխարհի անմահ երկերի մասին»:

Չնայած անտիկ գրողներին նա ծանոթ էր գերազանցապես ֆրանսիական թարգմանությունների միջոցով, այնուամենայնիվ, նա ոչ միայն հստակ հիշում էր այս կամ այն գրական հուշարձանի ընդհանուր բովանդակությունն ու բնորոշ մանրամասները, այլև նրա կարծիքներն իր կարողացածի մասին ապշեցնում էին իրենց դիպուկությամբ և խորությամբ:

Հայտնի են Պ. Վ. Նաշշոկինի և Ս. Պ. Սոբոլևսկու հիշողությունները (Պ. Վ. Բարտենևի գրառմամբ) այն մասին, որ Պուշկինը երիտասարդ լատինագետ Մալցին հիացնում էր Մարցիալիսի մասին իր դիտողությունների ճշգրտությամբ և դիպուկությամբ: «Մարցիալիսի գեղեցկությունը նրան ավելի հասկանալի էր, քան Մալցին, որն ուսումնասիրում էր բանաստեղծին: Մի անգամ Պուշկինը եկավ Մալցիի մոտ և գտավ նրան Պետրոնիոս կարդալիս: Մալցը ղփվարանում էր ինչ-որ բան հասկանալ. Պուշկինը կարդաց և նույն րոպեին ցրեց նրա տարակուսանքը»¹⁰:

Պուշկինի ծանոթությունը անտիկ աշխարհի հետ ընթացել է նաև ֆրանսիական թարգմանությունների միջնորդությամբ: Ֆրանսիական բանաստեղծների թվում, որոնցով հետաքրքրվել է Պուշկինը լիցեյական տարիներին, «միայն Գրեսսեն և Պարնին նրա հետ շփման կետ ունեն անտիկ աշխարհի հանդեպ վերաբերմունքի հարցում: Օրինակ, Գրեսսեի հետ Պուշկինին կարող էր մոտեցնել միայն դիցաբանական անվանացանկի ժանգլիորության արտաքին ձևը»¹¹, «Պուշկինի լիցեյական քնարերգության բոլոր եղած մերձեցումները Պարնիի հետ նույնպես ամենաքիչն են վերաբերում անտիկ բնագավառին»¹²: Դ. Պ. Յակուբովիչը գտնում է, որ նույն կերպ էր կապված Պուշկինը և մյուս ֆրանսիական բանաստեղծների հետ. «Հուլյն բանաստեղծներին Պուշկինը սկզբում ծանոթացել է Ն. Ֆ. Կոշանսկու, Պ. Յու. Լվովի, Ի. Մ. Մարտինովի թարգմանություններից: Անտիկ մշակույթի հասկացությունը դաստիարակվել է Գ. Ո. Դերժավինի և Կ. Ն. Բատյուշկովի ընդօրինակումների հիման վրա»¹³:

Խոսելով լիցեյական տարիների մասին, չի կարելի շրջանցել Պուշկինի ամենօրյա իրական տպավորությունների ևս մեկ շրջանակ, որը նրա ուշադրությունն ուղղում էր դեպի անտիկ դիցաբանությունը: Դա Յարսկոյե Սելոյի շրջապատն էր: Յարսկոյե Սելոն լիցեյիստներին դիմավորում էր հին աշխարհի կերպարներով, պլաստիկ արվեստի մեջ՝ գրքային դիցաբանության կոնկրետ մարմնավորումներով: Յարսկոյե Սելոն դիցաբանության կենդանի դպրոց էր, որն ամեն օր շրջապատում էր լիցեյիստներին. այգիների, պալատների, աստիճանների, սրահների կիսադարձիկներն ու արձանները, — ամեն ինչ խոսում էր անտիկ աշխարհի մասին: Լիցեյիստ-

⁹ Б. В. Томашевский. Пушкин. М., 1956, т. I, с. 536.

¹⁰ М. М. Покровский. Уշվ. աշխ., էջ 29:

¹¹ Д. П. Якубович, Уշվ. աշխ., էջ 110:

¹² Նույն տեղում, էջ 112:

¹³ Նույն տեղում, էջ 113:

Ների համար հատուկ հետաքրքրություն էր ներկայացնում Կամերոնյան պատկերասրահը՝ աստվածներ և հերոսներ պատկերող իր մարմարյա արձաններով ու կիսանդրիներով: Պատկերասրահում գտնվում էին Ցիցերոնի, Կեսարի, Հորացիոսի, Օվիդիոսի, Սկրատի, Սենեկայի, Կատոնի, Հիպոկրատի, Ալեքսանդր Մակեդոնացու, Անտոնինոսի, Թեոպիսի և ուրիշների պատկերները: Աստվածներն ու կիսաստվածները, որոնց մասին Կոշանսկին խոսում էր դասախոսությունների ժամանակ, «խմբվում էին չորս կողմը» և հիացմունքի առարկա էին հանդիսանում: «Հիշողություններ Յարսկոյե Սելոյից» (1829 թ.) բանաստեղծության մեջ, խոսելով Լիցեյի այգիների մասին, Պուշկինը հատուկ նշել է դրանց բնակեցվածությունը «աստժո կուտքերով»:

Այսպես, «Կյանքի սկզբում դպրոցն եմ հիշում ես» բանաստեղծության մեջ արտացոլված են հատկապես Լիցեյի այգիների հիշողությունները, որոնք «առաջին անգամ Պուշկինին տվեցին անտիկ աշխարհի տեսողական մարմնավորումները և հուշեցին Նրան անտիկ քանդակի ահավոր հրապույրի արարումը»¹⁴:

Любил я светлых вод и листьев шум,
И белые в тени дерев кумиры,
И в ликах их печать недвижных дум.
Средь отроков я молча целый день
Бродил угрюмый—все кумиры сада
На душу мне свою бросали тень.

(II, 252)

Յակուբովիչը չի ժխտում նաև կերպարվեստի այլ տեսակների ազդեցությունը Պուշկին-լիցեյիստի վրա՝ նկատի ունենալով ոչ միայն քանդակագործությունը, այլև գեղանկարչությունը: Փաստագրական տեղեկություններ են պահպանվել Եկատերինյան պալատի հետևյալ «սյուժեների» վերանորոգման անհրաժեշտության մասին, որոնք այնտեղ էին գտնվում, երբ Պուշկինը Լիցեյում էր. Ավրորան՝ առավոտյան ժամացույցի և Ջեփյուտի ուղեկցությամբ, Դիանան՝ Հավերժահարսերի և Էվդիմիոնոսին նկատող հանձարի հետ, Ջեփյուտը և Ֆլորան:

«Պուշկինի վաղ անտիկ քնարերգության մեջ հատուկ անունները առարկայական չեն և, հավանաբար, զուրկ են կոնկրետ զուգորդումներից. Արիստեզ, Զլիթոսը, Զլիմոնեն, Զլոեն, Դորիդան չեն ընդգրկում իրենց մեջ հին աշխարհի անհատականությունները»¹⁵: Այսպես, Դամոնի անունը տվել է Կոշանսկին, հիշատակել է Դելվիզը, հանդիպել է այն և Ֆրանսիական բանաստեղծների մոտ. Նրան, ինչպես և մյուսներին, կարելի էր օգտագործել «աբսոլյուտական-անտիկ կոյրոխ տեղեցելու» համար: Դրանք միայն անտիկ դիմակներ են, ոճի ազդակներ, սոսկ դեկորացիաներ:

Հետլիցեյական առաջին տարիներին (1817 թ. հուլիսից մինչև 1819 թ. ներառյալ) Պուշկինի հետաքրքրությունը անտիկ կերպարների հանդեպ թուլացավ: Բայց 1820 թ. սկսած, Պուշկինի վերաբերմունքը անտիկ մշակույթի նկատմամբ ստանում է նոր ուղղություն, նա սկսում է ըմբռնել այն նորովի, ավելի խոր, լուրջ, օրգանական, քան նախկինում:

20-ական թթ. սկզբի անթուրգիական պիեսի յուրացումը Պուշկինի համար հսկայական նըշանակություն ուներ: Մշակվում էր գեղանկարի պլաստիկա, խոսքային դինամիկայի սուր զգացողություն, պատկերման այն իդեալական հղկվածությունն ու ամբողջականությունը ձևավորելու կարողությունը, առանց որի հնարավոր չէ պատկերացնել անթուրգիական պիեսը: «Պուշկինյան հանձարը 20-ական թթ. անթուրգիական բանաստեղծություններում առաջին անգամ լրիվ փայլով ներկայացրեց իր ստեղծագործական ոգուն խորապես համաբնույթ հարմունիաի սկզբունքը և իր ցեղային ընդունակությունը՝ խորագույնս սուզվելու այլ մշակութային աշխարհների ամբողջության մեջ»¹⁶, — գրում է նորագույն հետազոտողը:

Այստեղ իրենց դերն են կատարել մի շարք հատուկ հանգամանքներ: Լիցեյից դուրս գալով՝ Պուշկինը մտերմացավ Ա. Ն. Օլենինի՝ Ռուսաստանում անտիկ աշխարհի խոշորագույն գիտակի և երկրպագուի, խմբակի հետ: Նրա սայլունում քննարկվում էին անտիկ բանաստեղծներից թարգմանության հարցերը, ոճի պրոբլեմներ և այլն: Նրա հետ ստեղծագործաբար կապված էին Ն. Ի. Գնեդիչը և Վ. Ա. ժուկովսկին: Հավանաբար Հունաստանի հանդեպ Պուշկինի հետաքրքրության մեջ օլենինյան շրջանակը կատարել է իր դերը: Պատահական չեն Պուշկինի կողմից Հոմերոսի բազմաթիվ հիշատակումները հատկապես այդ ժամանակաշրջանում: Ն. Ի. Գնեդիչի աշխատանքը «Իլիականի» վրա այդ և հաջորդ տարիներին փոխադրում էր հետաքրքրությունները հոմերական դասականությանից դեպի հունականը:

Պուշկինի գեղարվեստի զարգացման գործում մեծ և յուրահատուկ դեր խաղաց նրա ծա-

¹⁴ Նույն տեղում, էջ 118:

¹⁵ Նույն տեղում, էջ 121:

¹⁶ В. А. Грехнев. Лирика Пушкина. Горький, 1985, с. 92.

Նոթությունը XVIII դարի վերջի ֆրանսիական բանաստեղծ Ա. Շենյեի ստեղծագործության հետ (1819 թ., Լատուշի հրատարակությամբ)¹⁷: Իր իսկ՝ Պուշկինի բնորոշմամբ, Ա. Շենյեն իր համար հանդիսացավ «խակական հույն, դասականներից դասականը»: Պուշկինից նախկինում երբեք հատուկ չնկատված Թեոկրիտը, նախկինում երբեք նրան չգրաված հովվերգությունը, այժմ Պուշկինը անվանում է որպես իրական Հունաստանի հնության նմուշներ, որպես ոճ, որը համակել է նրան Շենյեի միջոցով: Չիմանալով հունարեն, Պուշկինը, «հնությամբ ներթմված» բանաստեղծի միջոցով, առաջին անգամ զգաց հելլենիզմի կենդանի բուրմունքն ու հրապույրը: Նա ձգտում էր դեպի Շենյեն, իսկ նրանից հետո նաև մյուսները, որոնք նախկինում հայտնի էին միայն անվանապես, և հին հույների պոեզիայի հետ ծանոթության հնարավոր աղբյուրներ էին նրա համար:

Իր դերը խաղաց նաև այն հանգամանքը, որ աջտրված Պուշկինը առաջին անգամ հայտնելվեց հարավում՝ անմիջականորեն մոտիկ այն վայրերին, որոնք սահմանակից էին հնագույն մշակույթի երկրներին: Ղրիմի, Կովկասի, Սև ծովի բնակարանները, հարավի բնությունը հիշեցնում էին Հունաստանն ու Իտալիան:

Անիրաժեշտ է ընդգծել, որ հին աշխարհով նրա հափշտակության մեջ անկարևոր դեր չի խաղացել նաև այն հանգամանքը, որ դասականության պաշտամունքը բավական մեծ տեղ էր զբաղեցնում ոչ միայն դեկաբրիստների բանաստեղծական, այլև քաղաքական մտածողության մեջ, որոնց հետ այնքան մտերիմ էր Պուշկինը: Հին աշխարհի պատմության իմացությունը գաղտնի ընկերության շրջանակներում համարվում էր պարտադիր:

Այդ տարիների դեկաբրիստական պոեզիան և հրապարակախոսությունը հագեցած են անտիկ անուններով: Որպես սպաներ, դեկաբրիստները վկայակոչում էին Ալեքսանդր Մակեդոնացու, Կեսարի, Թաբիսի, Սցիբիոնի ռազմական արվեստի դասական օրինակները: Որպես հայրենիքի հավատարիմ որդիներ, նրանք փառաբանում էին Լեոնիդոսի և Ֆեմիստոկլեսի հայրենասիրական քաջագործությունները: Անսահման հարգանքով էին դեկաբրիստներն արտասանում հակաբռնապետականների անունները՝ Բրուտոսի և Տիմոլեոնի, Արիսթիդեսի և Կատոնի, Ղեմնոսթենեսի և Ցիցերոնի¹⁸:

Ղեռնս Կ. Ի. Ամենակին հավաքել էր Նյութեր, որոնք թույլ են տալիս խոսելու դեկաբրիստների գաղափարախոսության վրա հնագույն գրողների զգալի ազդեցության մասին, նորագույն գրողների, պատմաբանների, տնտեսագետների և փիլիսոփաների հետ մեկտեղ¹⁹:

Ի. Գ. Յակուշինը հիշում է, որ Ղեռնս 1818 թ. «Պլուտարքոսը, Տիտոս Լիվիոսը, Ցիցերոնը, Տացիտոսը մեզ բոլորիս համար գրեթե սեղանի գիրք էին»²⁰: Ն. Ի. Տուրգենևը 1821—1824 թթ. քաղվածքներ է արել Պլուտարքոսից և Տիտոս Լիվիոսից: Պլուտարքոսի կենսագրության ընթերցանությունը դեկաբրիստներին հանգեցնում է հողատիրության չափերը օրենքով սահմանելու մտքին, ազատության և ժողովրդապետության հանդեպ սերը ծագեց նրանց մոտ հունական և հռոմեական պատմության ուսումնասիրությամբ, Պլուտարքոսի և Կոռնելիոս Նոպտի ընթերցանության ազդեցությամբ²¹:

Նախադեկաբրիստական տարիներին, երբ հանուն հայրենիքի ազատության մեծ քաջագործությունների անիրաժեշտությունը բաժանում էր գրեթե ողջ առաջադեմ ռուս երիտասարդությունը, հատկապես գաղտնի ընկերությանը մոտ կանգնած, դասականության պաշտամունքը ձեռք բերեց ոչ միայն ազատասիրական, այլև բացահայտ հեղափոխական բնույթ: Ղեռնս 1817 թ. Ն. Ի. Տուրգենևն իր մեջ ուժ էր գտնում ընդօրինակել Լեոնիդոսին, Բրուտոսին, Կուրցիոսին, Կատոնին²²: Բրուտոսի փառքի մասին երազում էին Ի. Գ. Յակուշինը և Պ. Գ. Կախովսկին: Սլավոնների միավորման ընկերության անդամ Յա. Մ. Անդրեևիչը երազում էր օգտակար լինել հայրենի երկրին՝ հետևելով հին հռոմեացիների և արենացիների օրինակին²³:

Իրենց հեղափոխական պայքարում դեկաբրիստներն օբյեկտիվորեն պաշտպանում էին հասարակության բուրժուական վերափոխման նպատակներն ու խնդիրները, հռոմեացիների մոտ տեսնում էին բազմաթիվ ռազմական և հայրենասիրական արժեքներ, բարձր էին գնահատում հին հունական օրենսդրությունը, հարկերի մուծման հին հռոմեական սկզբունքը:

Հին Հունաստանում և Հռոմում դեկաբրիստները արդարացիորեն տեսնում էին ժամանա-

¹⁷ Д. П. Якубович, *Նշվ. աշխ.*, էջ 129:

¹⁸ С. С. Волк, *Исторические взгляды декабристов*. М.-Л., 1958, с. 155.

¹⁹ В. Н. Семевский, *Политические и общественные идеи декабристов*. СПб., 1909, с. 220.

²⁰ Записки, статьи, письма декабриста И. Д. Якушина. М., 1925, с. 20.

²¹ В. Н. Семевский, *Նշվ. աշխ.*, էջ 228:

²² Дневники и письма Н. И. Тургенева, ОПБ., 1911, т. III, с. 94.

²³ Избранные социально-политические и философские произведения декабристов. М., 1951, т. III, с. 97,

կակից եվրոպական մշակույթի սկիզբը, «փառավոր կեցութունը ժողովուրդների, որոնք սերունդներին են թողել» գրականության, օրենսդրության, թանարվեստի, ճարտարապետության և անտոանալի և թանկարժեք հուշարձաններ»:

Այս ամենը Պուշկինին ստիպեց կտրուկ կերպով փոխել նախկին «լիցեյական» վերաբերմունքը անտիկ աշխարհի նկատմամբ: Ռրա հետևանքով Պուշկինի քնարերգության մեջ հղնչեցին ոչ միայն նոր անտիկ մոտիվներ, այլև հինը շրջվեց, նորովի իմաստավորվեց, դարձավ մտերիմ՝ զուգակցվելով անձամբ զգացածի հետ:

Պուշկինյան հանձարն այդ ժամանակ, հավանաբար, ծգտում է հավասարակշռել իր գեղարվեստական հակումները, կարծես չեզոքացնելով ուժանտիկական սուբյեկտիվության ավելցուկը:

Պետևս Լիցեյում «Պուշկինը վառ և ինքնատիպ կերպով հասնում է դասականության մի շարք ռեպերտուարների խոր հասկացողությանը, այլ ոչ միայն նրա պայմանական կամ պատկերավոր դիցաբանական կողմին»²⁴:

«Լիցիևիոսին» ուղերձում (1815 թ.) Պուշկինը ներկայագրել է հին Հռոմի պատկերը, տրվել նրան քաղաքական երգիծանքի իմաստ, որը հակադարձել է սեփական ժամանակաշրջանի համար: «Լիցիևիոսին» բանաստեղծության մեջ Պուշկինն «առաջին անգամ ցույց տրվեց, որ բարեկեցիկ դասականության մեջ դեռևս երեխա ժամանակ նա տարբերում էր «ժողովրդական հուզումների» աղմուկը»²⁵: Կարևոր է և այն, որ հասկանալով դասականությունը այդքան խորը՝ արդեն վաղ տարիներին իրականության պատկերման համար նա օգտվում էր նոր հասկացությունից: «Լիցիևիոսին» բանաստեղծությունը պետք է որ հնչեր և կարդացվեր ռուս հասարակայնության առաջադեմ շրջաններում, իբրև մի բան, որն ուղղված է նաև ռուս իրականությանը, որոնք կանխագուշակում էին ղեկաբրիտների ու շրջանի բողոքները «ժառանգներին»: Ռուսական պոեզիայում առաջինը Պուշկինը գեղարվեստորեն մարմնավորեց անտիկ աշխարհի այս նոր հնչողության ըմբռնումը:

Н. С. АРУТЮНЯН—Начало знакомства Пушкина с античной литературой.—

Античное искусство сопровождало Пушкина с первых лет учебы в царском лицее, к нему поэт обращался на самых важных этапах жизни и творчества. Влияние древней литературы было настолько глубоким, что поэт иногда говорил о себе на ее языке (на языке Овидия—о ссылке в Бессарабию, на языке Тацита—о своей жизни в Михайловском).

Основными источниками античного искусства для Пушкина являлись как произведения антиков на языке оригинала, так и эти же произведения в переводе на французский язык. Сыграла роль и атмосфера, окружавшая поэта в Царском Селе.

Наиболее сильно в творчестве Пушкина влияние Горация. Ему была близка также лирика Овидия, Вергилия, Тибулла, Петрония и др. Любил и ценил Пушкин также А. Шенье за проникновение в дух античного, в особенности древнегреческого искусства.

²⁴ Д. П. Якубович. Եզվ. աշխ., էջ 122:

²⁵ Նույն տեղում, էջ 123: